ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 59-Լ «18» 12 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 18-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 18-Լ հրամանում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությունն (այսուհետ՝ Վարչություն) անվանափոխել մասնագիտական կրթության և ուսուցման վարչության:

2. Հրամանի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) Վարչության կառուցվածքում կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունը.

1) ստեղծել նոր բաժին՝

«Լրացուցիչ և շարունակական կրթության բաժին».

2) Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «մասնագիտական կրթության և ուսուցման բաժինը» բառերը փոխարինել «մասնագիտական կրթության և ուսուցման համակարգման» բառերով.

3) Հավելվածի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«7. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները.

1) մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժին,

2) մասնագիտական կրթության և ուսուցման համակարգման բաժին,

3) լրացուցիչ և շարունակական կրթության բաժին:

3. Հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

12/18/2024

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված

Հայաստանի Հանրապետության

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2024թ. -------- -ի N -Լ հրամանի

«Հավելված

Հայաստանի Հանրապետության

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2019թ. հունիսի 10-ի N 18 -Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) մասնագիտական կրթության և ուսուցման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Գլխավոր քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մասնագիտական կրթության և ուսուցման վարչություն:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7.Վարչության նպատակն է՝

1) ապահովել Նախարարության կողմից մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում քաղաքականության և ռազմավարության մշակումը և իրականացումը,

2) ստեղծել բարենպաստ պայմաններ անհատի ուսումնառության անձնական և մասնագիտական կարիքները բավարարելու համար,

3) աջակցել մարդկային կապիտալի շարունակական զարգացման միջավայրի ու պայմանների ապահովմանը,

4) նպաստել յուրաքանչյուր անձի նախընթաց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները՝ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով կատարելագործելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու գործընթացների կազմակերպմանը:

8.Վարչության խնդիրներն են՝

1) մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովումը և բարելավման համակարգի ներդրումը,

2) աշխատանքային շուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթությամբ անձանց պատրաստումը՝ հաշվի առնելով անձի նախասիրությունները, զարգացման առանձնահատկությունները, պետության և տնտեսության կարիքները, աշխատաշուկայի ժամանակակից պահանջները և զարգացման միտումները և վերապատրաստմանն աջակցելը,

3) կրթական գործընթացի ներառականության, անընդհատության, շարունակականության թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,

4) մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը,

5) մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի՝ միասնական Եվրոպական կրթական տարածքին ինտեգրման ապահովումը,

6) պետության գնահատված կարիքների հիման վրա առաջնահերթ համարվող ոլորտներում, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի համար մասնագետների պատրաստմանը և կատարելագործմանն աջակցություն,

7) մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի շարունակական զարգացման ապահովում, հարատև կրթության հնարավորությունների ընդլայնում,

8) կրթական ծրագրերի մակարդակների, որակավորումների ու տնտեսության համապատասխան բնագավառների միջև համագործակցային արդյունավետ ձևաչափերի ստեղծում՝ համատեղ միջոցառումների, փորձարարական ծրագրերի, ծախսարդյունավետության և փոխադարձ աջակցության համար,

9) մանկավարժական աշխատողների շարունակական կատարելագործմանը նպաստում.

10) օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների կարգավորում և լուծում,

11) ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմների ներդրում,

12) մեծահասակների հարատև ուսումնառության և շարունակական զարգացման համար միջավայրի ապահովում,

13) լրացուցիչ կրթական ծրագրերի Ազգային ռեեստրի ստեղծում,

14) ոչ ֆորմալ կրթության հանրահռչակմանն ուղղված աշխատանքների կազմակերպում,

15) լրացուցիչ և շարունկակական կրթության ոլորտի քաղաքականության մշակում,

16) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների նկատմամբ մոնիթորինգի իրականացում:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝ ըստ բաժինների.

1) Մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժին.

ա. մասնագիտական կրթության փորձնական կրթական ծրագրերի ներդրման, մոնիտորինգի և գնահատման իրականացմանը մասնակցություն և համակարգում,

բ. մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների, որակավորումների ազգային շրջանակի, ոլորտային որակավորումների շրջանակի և դրանց բնութագրերի մշակման, վերանայման, փորձարկման և ներդրման գործընթացին մասնակցություն,

գ. մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի նիստերին մասնակցություն (որպես խորհրդի անդամ),

դ. մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության մշակմանը մասնակցություն,

ե. մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակում, մոնիթորինգ և գնահատում,

զ. մասնագիտական կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակմանը մասնակցություն,

է. Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մասնագիտական կրթության վերաբերյալ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների, կրթության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում,

ը. կրթության զարգացման պետական ծրագրի մշակմանը և դրա իրականացման աշխատանքների համակարգմանը մասնակցություն՝ մասնագիտական կրթության և ուսուցման մասով,

թ. պետական ռազմավարական ծրագրերի շրջանակներում մասնագիտական կրթության ծրագրերի իրականացման կազմակերպմանը և մոնիթորինգին մասնակցություն,

ժ. մասնագիտական կրթության բնագավառին վերաբերող միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանը և իրականացմանը մասնակցություն,

ժա. մասնագիտական ուսումնական հաստատությունների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության և միջոցառումների կազմակերպում և իրականացում,

ժբ. մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգին առնչվող գործընթացին մասնակցություն,

ժգ. մասնագիտական կրթության ոլորտի դասագրքերի, ուսումնական ձեռնարկների՝ նախարարության կողմից երաշխավորման գործընթացի իրականացում,

ժդ. Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային խորհրդի կազմի վերանայման և հաստատման Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի մշակում,

ժե. Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային խորհրդի քարտուղարության գործառույթների իրականացում՝ խորհրդի նիստերի կազմակերպում, արձնագրությունների կազմում, որոշումների կատարում և համակարգում.

ժզ. Եվրամիության աջակցության ծրագրերի նախագծերի մշակմանը մասնակցություն և իրականացում,

ժէ. գործընկեր միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի նախագծում, իրականացում, մոնիթորինգ և գնահատում,

ժը. միջազգային համաժողովներին և վերապատրաստման ծրագրերի աշխատաժողովների մասնակցություն,

ժթ. մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ներդրման աշխատանների իրականացում, վերապատրաստման ծրագրերի կազմակերպմանը համակարգում, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների գործունեության արդյունավետության մոնիթորինգ և գնահատում,

ի. մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտային հայեցակարգերի, ռազմավարական և բարեփոխումների ծրագրերի նախագծերի մշակում,

իա. Կառավարության գործունեության միջացառումների նախագծերի մշակմանը մասնակցություն,

իբ. մասնագիտական կրթության և ուսուցման մասով Նախարարության համակարգի բյուջետային գործընթացի մշակմանը և ապահովմանը մասնակցություն,

իգ. մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի գործունեության մոնիթորինգի (մշտադիտարկման) կազմակերպում, վերլուծություն, մատուցվող կրթական և այլ ծառայությունների ծախսարդյունավետության և արդյունավորության գնահատում,

իդ. մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի միջազգային ինտեգրման ապահովմանը մասնակցություն, օտարերկրյա և միջազգային համապատասխան կազմակերպությունների և հաստատությունների հետ համագործակցության իրականացում,

իե. Կառավարության հանձնարարականների հիման վրա հաշվետվությունների՝ ներառյալ տարեկան ամփոփիչ, պատրաստում և ներկայացում,

իզ. մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտին առնչվող այլ գերատեսչությունների, կազմակերպությունների և կառույցների կողմից մշակված իրավական ակտերի, ռազմավարական փաստաթղթերի, զեկույցների և այլ փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ներկայացում,

իէ. Նախարարության տեղեկատվական քաղաքականության և հասարակայնության հետ կապերի կազմակերպմանը և իրականացմանը մասնակցություն,

իթ. աշխատանքի վրա հիմնված կամ դուալ ուսումնառության համակարգման աշխատանքներին մասնակցություն,

լ. մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակում և վերանայում,

լա. մասնակցություն մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում խելամիտ հարմարեցումների ստեղծման և ներառման գործընթացին մասնակցություն,

լբ. Հայաստանի Հանրապետության օրենքներով և ոլորտը կարգավորող ենթաօրենդրական ակտերով սահմանված այլ գործառույթների իրականացում,

լգ. մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման, ատեստավորման և տարակարգի շնորհման գործընթացի կազմակերպում:

2) Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգման բաժին.

ա. մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակում և վերանայում,

բ. մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների, որակավորումների ազգային շրջանակի, ոլորտային որակավորումների շրջանակի և դրանց բնութագրերի մշակման, վերանայման, փորձարկման և ներդրման գործընթացին մասնակցություն,

գ. մասնագիտական պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների ձևավորում և վերանայում,

դ. մասնագիտական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի նիստերին մասնակցություն (որպես խորհրդի անդամ),

ե. մասնագիտական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության մշակում և հաստատմանը ներկայացում, ուսումնական հաստատությունների կանոնադրությունների հաստատում և վերանայում,

զ. միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ, որակավորմամբ կրթությունը սահմանված կարգով շարունակելու գործընթացի կազմակերպում և ապահովում,

է. մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով դիմած անձանց վերապատրաստող կազմակերպությունների ընտրության գործընթացի կազմակերպում,

ը. մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի պատվիրման գործընթացին մասնակցություն,

թ. Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մասնագիտական կրթության վերաբերյալ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների, համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում և մասնակցություն,

ժ. Նախարարության ենթակայությամբ գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության համակարգում,

ժա. մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և ոչ պետական հավատարմագրված ուսումնական հաստատություններում ուսումնասիրությունների իրականացում, պարզաբանումներ ներկայացում և խորհրդատվության տրամադրում,

ժբ. Պետական և հանրային մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության գործընթացի կազմակերպում՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով ըստ մասնագիտությունների նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կամ յուրաքանչյուր ուսումնական տարվա լրիվ կամ մասնակի կրթաթոշակի ձևով ընդունելության տեղերի՝ ըստ որակավորումների (ուղղվածության), քննական հանձնաժողովների նախագահների հաստատում, ընդունելության արդյունքների ամփոփում,

ժգ. Պետական և հանրային մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական ամփոփիչ ստուգման հանձնաժողովների նախագահների հաստատման նախարարի հրամանների նախագծերի պատրաստում և արդյունքների ամփոփում,

ժդ. մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումների ներկայացում՝ ըստ հարցումների,

ժե.մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական նմուշի փաստաթղթերի հայտավորման և բաշխման աշխատանքներին մասնակցություն,

ժզ. մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ստեղծման, օպտիմալացման (խոշորացման) և լուծարման առաջարկությունների ներկայացում և կազմակերպման աշխատանքներին մասնակցություն,

ժէ. մասնագիտական կրթության բնագավառում պետական պարգևների ներկայացման և գերատեսչական պարգևների շնորհման աշխատանքների իրականացում,

ժը. պետական և հանրային մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա լրիվ կամ մասնակի կրթաթոշակի ձևով ընդունելության տեղերը՝ ըստ որակավորումների (ուղղվածության) հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում,

ժթ. քաղաքացիների դիմումների, կազմակերպությունների, գերատեսչությունների կողմից ստացված գրությունների քննարկում և պատասխան գրությունների նախագծերի՝ այդ թվում նաև տեղեկանքների և հաշվետվությունների պատրաստում,

ի. մասնագիտական ուսումնական հաստատությունների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին աջակցություն և մասնակցություն,

իա. Եվրամիության աջակցության ծրագրերի իրականացման մասնակցություն,

իբ. միջազգային համաժողովներին և վերապատրաստման ծրագրերին մասնակցություն, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովում,

իգ. մասնագիտական կրթության ոլորտին և ուսուցման առնչվող այլ գերատեսչությունների, կազմակերպությունների և կառույցների կողմից մշակված իրավական ակտերի, ռազմավարական փաստաթղթերի, զեկույցների և այլ փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ներկայացում,

իդ. մասնագիտական կրթության ոլորտին առնչվող Կառավարության գործունեության միջացառումների իրականացման մասնակցություն,

իե. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական

վիճակագրական ռեգիստրների վարմանը մասնակցություն՝ մասնագիտական կրթության մասով,

իզ. մասնագիտական կրթության համակարգերի որակի և արդյունավետության մոնիթորինգ և մասնակցություն այդ բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատմանը,

իէ. տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից մշակված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված և մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտին առնչվող միջոցառումների կատարման ապահովում և հաշվետվությունների ներկայացում,

իը. աշխատանքի վրա հիմնված կամ դուալ ուսումնառության համակարգման աշխատանքներին մասնակցություն,

իթ. մասնակցություն մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում խելամիտ հարմարեցումների ստեղծման և ներառման գործընթացին մասնակցություն,

լ. մասնագիտական կրթության և ուսուցման մասով Նախարարության համակարգի բյուջետային գործընթացի մշակմանը և ապահովմանը մասնակցություն,

լա. Հայաստանի Հանրապետության օրենքներով և ոլորտը կարգավորող ենթաօրենդրական ակտերով սահմանված այլ գործառույթների իրականացում.

լբ. մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման, ատեստավորման և տարակարգի շնորհման գործընթացի կազմակերպում:

3) Լրացուցիչ և շարունակական կրթության բաժին.

ա. Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների, համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում,

բ. ոչ ֆորմալ կրթության զարգացմանը և իրազեկմանը ուղղված միջոցառումների կազմակերպում,

գ. լրացուցիչ և շարունակական կրթության զարգացման ապահովում, լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների, ոչ ֆորմալ կրթության վիճակագրական քանակական և որակական տվյալների հավաքագրում,

դ. լրացուցիչ կրթական ծրագրերի երաշխավորման գործընթացի իրականացում,

ե. լրացուցիչ կրթական ծրագրերի Ազգային ռեեստրի վարում,

զ. մեծահասակների և ավագ սերնդի հարատև կրթության խրախուսում,

է. լրացուցիչ և շարունակական կրթության աշխատանքների կազմակերպում և համակարգում,

ը. ոչ ֆորմալ կրթության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակում,

թ. ոչ ֆորմալ կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման մասնակցություն,

ժ. կրթության զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման, դրանց մոնիթորինգի և գնահատման աշխատանքների մասնակցություն,

ժա. Նախարարության և նրա համակարգի բյուջետային գործընթացի ապահովման մասնակցություն,

ժբ. ոչ ֆորմալ կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի և պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման աշխատանքների իրականացմանը մասնակցություն,

ժգ. դրամաշնորհների տրամադրման և գնման հայտերի տրամադրման աշխատանքների իրականացմանը մասնակցություն,

ժդ. Հայաստանի Հանրապետության օրենքներով և ոլորտը կարգավորող ենթաօրենդրական ակտերով սահմանված այլ գործառույթների իրականացում:

4.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:
11. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:
12. Վարչության ընթացիք գործունեությունը կազմակերպում են բաժնի պետերը:
13. Վարչության պետը, բաժնի պետերը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական աշխատողներ:
14. Վարչության պետի, բաժնի պետերի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու

լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

5.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

15. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորներից՝

1) Մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժին,

2) Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգման բաժին,

3) Լրացուցիչ և շարունակական կրթության բաժին:»: